

ԱՂԻ ՎԱՃԱՌՈՐԴԸ ԵՒ ԻՐ ԷՇԸ




Ժամանակին աղի վաճառորդ մը կար, որ մօտակայ քաղաքէն աղ կը գներ եւ պարկերը իշուն վրայ բեցնելով կը ծախէր շուրջի գիւղերուն: Ճամբուն վրայ կար գետակ մը, ուրկէ կ'անցնէին: Սակայն քանի որ կամուրջ չկար եւ ջուրն ալ խորունկ չէր, գետակը կ'ացնէին ջուր մտնելով: Օր մը, մարդուն չար բախտէն, էջը կը սահի եւ ջուրին մէջ կ'իյնայ: Աղերուն մեծ մասը կը լուծուի ջուրին մէջ: Երբ էջը դարձեալ կը կանգնի, կը զգայ, որ բեռը բաւական թեթեւցած է:



Այդ օրուրնէ սկսեալ, ամէն անգամ որ էշը գետակէն պիտի անցնէր, կ'իյնար ջուրին մէջ: Վաճառորդը ի վերջոյ կը սկսի կասկածիլ, որ էշը դիտմամբ* կ'իյնայ՝ բեռը թեթեցնելու համար: Ուրեմն կ'որոշէ անոր դաս մը տալ: Յաջորդ քաղաք երթալուն, աղի փոխարէն բամպակ կը գնէ ու կը բեռցնէ իշուն վրայ: Էշը կը զգայ, որ բեռը աւելի թեթեւ է, բայց կը մտածէ, որ եթէ դարձեալ ջուրը իյնայ, ա՛լ աւելի պիտի թեթեւնայ: Ուստի, ըստ սովորութեան, դարձեալ կ'իյնայ ջուրին մէջ: Բայց երբ կը փորձէ կանգնիլ, բեռան ծանրութիւնը զինք կրկին վար կը ձգէ, որովհետեւ բամպակը ջուր ծծած է: Չստ ծանրացած էր: Վաճառորդը լաւ մը կը ծեծէ իշուն, մինչեւ որ կանգնի եւ այդ ծանրացած բեռով քալէ: Այդ օրուրնէ սկսեալ, էշը կարելին կ'ընէ դարձեալ ջուրը չիյնալու: **Պատմուածքը ցոյց կու տայ, որ մեր գործը դիւրացնելու համար եթէ խաբէութեան դիմենք, հետեւանքը գէշ կ'ըլլայ:**

ՓԻՂԻՆ ԸՆԿԵՐՆԵՐԸ



Փիղ մը միայնակ կը թափառէր անտառին մէջ եւ ընկերներ կը փնտռէր: Ճամբուն վրայ կը հանդիպի կապիկի մը եւ կըսէ.


--Ո՛վ կապիկ, իմ ընկերս կ'ըլլա՞ս: Կապիկը կը պատասխանէ.

--Դուն շատ մեծ ես եւ ծառ չես կրնար մագլցիլ, ուրեմն ընկերդ չեմ կրնար ըլլալ: Փիղը կը շարունակէ ճամբան եւ կը հանդիպի նապաստակի մը եւ անոր ալ կը հարցնէ, եթէ կ'ուզէ իր ընկերը ըլլալ: Նապաստակն ալ կը պատասխանէ, թէ փիղը շատ մեծ է իր ընկերը ըլլալու համար: Ապա կը հանդիպի գորտի մը եւ անկէ ալ կը խնդրէ իրեն ընկեր ըլլալ: Գորտը կ'ըսէ.

--Դուն շատ մեծ ես եւ չես կրնար ցատկել ինծի պէս, հետեւաբար կը ներես, բայց չեմ կրնար ընկերդ ըլլալ:

Փիղը յուսախաբ կը շարունակէ ճամբան՝ բոլոր անասուններէն նոյն պատասխանը ստանալով:

Յաջորդ առաւօտ փիղը կը տեսնէ, որ անտառի բոլոր կենդանիները ահ ու դողի մատնուած կը փախչէին: Արջին հարցնելով կ'իմանայ, որ վագր մը յարձակած էր անտառի կենդանիներուն վրայ:



Փիղը կ'որոշէ փրկել տկար կենդանիները, ուստի կը յարձակի վագրին վրայ եւ կը փախցնէ զայն: Անոնք լսելով, որ փիղը փրկած էր զիրենք վագրէն, միաբերան (միասնաբար) կ'ըսեն փիղին.

-- Կարևոր չէ, եթե դուն մեծ ես թե փոքր: Մենք կը փափաքինք ընկերդ ըլլալ:

Այս պատմութիւնը ցոյց կու տայ, որ բարեկամութեան չափանիշը տարիքը կամ չափը չէ, այլ վերաբերմունքը:

ՀՈՄԱՆԻՇՆԵՐ ԿՐՆԱՊՍ ՊՏՆԵԼ

Ձախ կողմի սինակի իւրաքանչիւր բառ միացո՛ւր աջ կողմի սինակի համապատասխան հոմանիշին:

ճոխ

անյաջող

հակամէտ

ճարտար

հրաշալի

համակ

ձախող

փարթամ

հուժկու

ձախաւեր

ճարպիկ

տրամադիր

ձեռնտու

հիանալի

ամբողջ

յաղթանդամ

անճարակ

յարմար